Կոխլեար իմպլանտի տեղադրում դրամաշնորհային աջակցություն մարդկային անվտանգության ծրագրերի համար ՖՏ 2017: «Հայաստանի Հանրապետությունում նորածինների լսողության քննության բարելավման ծրագրի» առնչությամբ

2018թ.-ի օգոստոսի 9-ին, «Էրեբունի» ԲԿ-ում տեղի ունեցավ 5-ամյա Արփինե Աբրահամյանի՝ ով 3 տարեկան հասակում կորցրեց իր լսողությունը, կոխլեար իմպլանտի տեղադրումը: Տեղադրումից հետո, առաջին վայրկյաններին Արփին վախեցավ լսելով նրան շրջապատող բազմազան ձայները, արտասվեց անսպասելիությունից, սակայն մի քանի րոպե անց նա սկսեց սովորեց դրանց և սկսեց ծիծաղել ու վայելել տարատեսակ ձայներով լի աշխարհը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Ջուն Յամադան, ՀՀ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը, «Էրեբունի» ԲԿ-ի տնօրեն պրոֆեսոր Միքայել Մանուկյանը և Հայկական միջազգային բժշկական հիմնադրամի նախագահ Սալպի Ագարակյանը:

Ճապոնիայի կառավարությունը աջակցում է լսողության խնդիրներ ունեցող հայ երեխաների բուժմանը Դրամաշնորհային աջակցության մարդկային անվտանգության ծրագրերի համար ՖՏ 2017: «Հայաստանի Հանրապետությունում նորածինների լսողության քննության բարելավման ծրագրի» միջոցով:

2018 թվականի մարտի 14-ին Ճապոնիայի դեսպանատունը և «Հավատ» ՀԿ-ն ստորագրել են այս դրամաշնորհային պայմանագիրը: Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվել է 90.667 ԱՄՆ դոլար: (տես նույնպես՝ Ծրագրի ավարտական արարողության մասին հոդվածը):

EREBOUNI
MEDICAL CENTER